ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.3. Հարավարևմտյան Ասիա: Բնակչությունը: Տնտեսությունը

• • •

Բնակչության բնական աճի ցուցանիշները երկրների մեծ մասում բարձր են՝ Իրան, Աֆղանստան, Եմեն, ինչը գերազանցապես պայմանավորված է կրոնական և ազգային սովորույթներով: Վերջին տասնամյակներում ուրբանացման, բնակչության գրագիտության ու կենսամակարդակի բարձրացման շնորհիվ բնական աճի տեմպերը զգալիորեն նվազել են՝ Իսրայել, Կիպրոս, Լիբանան, Հայաստան, իսկ Վրաստանում բնական աճը նույնիսկ բացասական է:

• • •

Ազգային կազմը խայտաբղետ է: Տարածաշրջանում ապրող ազգերից առավել ցրված տեղաբաշխում ունեն հայերն ու քրդերը: Քրդերը չունեն նաև պետականություն: Ապրում են Իրանի, Թուրքիայի, Իրաքի ու Սիրիայի սահմանամերձ գոտիներում ու պայքարում են իրենց անկախության համար: Հայկական խոշոր գաղթավայրեր կան Վրաստանում, Իրանում, Լիբանանում, Կիպրոսում, Թուրքիայում, Իսրայելում, Սիրիայում: Այս երկրներում հայկական համայնքների լուրջ համախմբում (կոնսոլիդացիա) կա, ինչի շնորհիվ հայերը մեծ դերակատարում ունեն այդ երկրների մեծ մասի տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական կյանքում: Հարավարևմտյան Ասիայի 19 երկրներից 11-ը արաբական են:

Պատմության տարբեր փուլերում տարածաշրջանում ձևավորված են եղել բազմաթիվ երկրներ, որոնք ժամանակի ընթացքում տարածքային փոփոխության են ենթարկվել կամ վերացել: Քաղաքատարածքային բաժանումը այնքան զգալի է փոխվել, որ այսօր չկան շատ կայսրություններ ու պետություններ. **Մեծ Հայք**, **Բյուզանդիա**, **Ասորեստան**, **Խեթերի պետություն**, **Մարաստան**, **Բաբելոն**, **Էլամների պետություն** և այլն:

• • •

Պայմանավորված բնակլիմայական պայմաններով ու բնակեցման ժամանակով տարածաշրջանում բնակչությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված: Խիտ են բնակեցված ծովափնյա շրջանները, **Միջագետքի**, **Կուրարաքսյան**, **Լենքորանի** ու **Կոլխիդայի** դաշտավայրերը, **Արարատյան դաշտը**, որտեղ բնակչության միջին խտությունը ավելի քան 100 մարդ. քառ. կմ է, առանձին շրջաններում՝ ավելի քան 400 մարդ. քառ. կմ: Բարձր լեռնային և անապատային շրջանները գրեթե բնակեցված չեն: Տարածաշրջանի միլիոնավոր մարդիկ դեռևս մշտական բնակավայրեր չունեն ու վարում են կիսաքոչվորական կյանք (**Բեդուիններ**):

Հարավարևմտյան Ասիայի երկրներում բարձր է ուրբանացման մակարդակը: Առանձին երկրներում այն անցնում է 80%-ից:

Տարածաշրջանը աշխարհի հին բնակեցված և քաղաքակրթությունների օրրան է: Այստեղ շատ են հազարամյակների պատմություն ունեցող քաղաքները՝ **Երևան**, **Դամասկոս**, **Երուսաղեմ**: Խոշորագույն քաղաքներն են **Ստամբուլը**, **Թեհրանը**:

• • •

Հարավարևմտյան Ասիայի երկրների մեծ մասի տնտեսությունը հենվում է հանքային հումքի արդյունահանման ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման վրա: Տարածաշրջանի երկրները գտնվում են տնտեսական զարգացման տարբեր փուլերում: Իսրայելն ունի զարգացման բարձր մակարդակ, նավթարդյունահանող երկրները՝ մեկ շնչի հաշվով բարձր ՀՆԱ, Թուրքիան և Իրանը ինդուստրիալ ագրարային երկրներ են, Հորդանանը, Եմենը և Աֆղանստանը ունեն տնտեսության զարգացման ցածր մակարդակ:

Տարածաշրջանը երկրներն արտահանում են նավթ ու նավթամթերքներ, բնական գազ, քրոմիտ, աղեր, հագուստ, կենցաղային էլեկտրատեխնիկական սարքավորումներ, գյուղատնտեսական մթերքներ: Այստեղ տնտեսության վարման տեսանկյունից առանձնանում են փոքր երկրները՝ Կիպրոսը ու Լիբանանը, որոնք աչքի են ընկնում զբոսաշրջությամբ, ցիտրուսների և ձիթապտղի արտադրությամբ, հուսալի բանկային գործունեությամբ: Իսրայելը բարձր տեխնոլոգիաների, գիտական խոշոր ներդրումների մեծ ծավալ ունեցող, հետինդուստրիալ երկիր է: Կատարի տնտեսությունը հենվում է գերազանցապես բնական գազի հանույթի և արտահանման, ինչպես նաև օդային տրանսպորտի սպասարկումից ստացվող եկամուտների վրա: Հայտնի են աֆղանական, պարսկական գորգերն ու չոր մրգերը, իրաքյան նավթն ու արմավը (փյունիկյան), թուրքական ու սիրիական թեթև արդյու-

նաբերության ապրանքները:

• • •

Էլեկտրաէներգետիկայի հիմնական աղբյուրը նավթն ու գազն են, մասամբ՝ ածուխը և ջրային ռեսուրսները (Վրաստան, Հայաստան): Երկրներից երկուսում՝ Հայաստանում (Մեծամոր) և Իրանում (Բուշեհր) գործում են ատոմակայաններ: Մեծ հնարավորություններ կան արևային ու հողմային էլեկտրակայաններ կառուցելու համար:

Մետաղաձուլությամբ ու մեքենաշինությամբ առաջատար երկրներ են Իսրայելը, Իրանը, Թուրքիան, ոչ մեծ ծավալով՝ Հայաստանը և Վրաստանը: Քիմիական արդյունաբերության մեջ առաջատարը նավթագազաքիմիան է՝ Իրան, Սաուդյան Արաբիա,ԱՄԷ, Կատար, Բահրեյն, փոքր քիմիան՝ Իսրայել, Հայաստան, ինչպես նաև պարարտանյութերի, պլաստմասսաների, ռետինատեխնիկական իրերի արտադրությունը:

• • •

Բուսաբուծությունը գլխավորապես հենվում է ոռոգովի դաշտավարության վրա: Առկա են գյուղատնտեսության վարման առաջավոր եղանակներով զարգացող ապրանքային բարձր նշանակություն ունեցող շրջաններ՝ Արարատյան դաշտը, Կոլխիդայի դաշտավայրը, ծովափնյա շրջանները: Տարածաշրջանի ներքին, նախալեռնային շրջաններում բուսաբուծությունը էքստենսիվ է և ունի գլխավորապես սպառողական նշանակություն:

Բացատրե՛ք «Էքստենսիվ» և «ինտենսիվ» գյուղատնտեսություն հասկացությունները:

Բուսաբուծությունը բազմաճյուղ է, աճեցնում են հացահատիկ, մրգեր, կարտոֆիլ, բանջարաբոստանային մշակաբույսեր, կերաբույսեր և այլն: Թուրքիան, Իրանը, Իրաքը մշակում են հացահատիկի գրեթե բոլոր տեսակները: Թվարկե՛ք տարածաշրջանում աճեցվող հացահատիկի հիմնական տեսակները :

• • •

Ավտոմոբիլային առաջնակարգ ճանապարհներն առավելապես կապում են մայրաքաղաքները հանքաարդյունաբերական շրջանների, նավահանգիստների ու զբոսաշրջային վայրերի հետ: Երկաթուղային տրանսպորտը տարածաշրջանում զարգացման բարձր մակարդակ չունի: Երկաթուղիները

ձգվում են դեպի Եվրոպա, Ռուսաստան ու խոշոր նավահանգիստներ: Երկրների զգալի մասում երկաթուղին բացակայում է՝ Եմեն, Կիպրոս, Քուվեյթ, Բահրեյն, Օման: Արտաքին աշխարհի հետ կապը իրականացվում է խոշոր նավահանգիստների միջոցով:

• • •

Հարավարևմտյան Ասիայի երկրների բնակչության թվաքանակի վրա մեծ ազդեցություն ունեն միգրացիաները, հատկապես՝ դեպի Պարսից ծոցի ավազանի երկրներ, որտեղ երկրների բնակչության թիվը անհամեմատ փոքր է, քան եկվորներինը: Քուվեյթի բնակչության 31%-ը, ԱՄԷ-ի՝ 12,1%-ը, Կատարի՝ 11,6%-ը, Բահրեյնի՝ 55%-ը, Օմանի՝ 54%-ը կազմում են երկրի բնակչությունը: Եկվորները գերազանցապես Հարավային, Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանների տնտեսապես թույլ զարգացած երկրներից են: Ի հաշիվ աշխարհի տարբեր տարածաշրջաններից դեպի հայրենիք վերադարձած հրեաների, կտրուկ ավելացել է Իսրայելի բնակչության թիվը:

• • •

Նշեք քրիստոնեություն, մահմեդականություն և հուդայականություն դավանող ազգերը:

Գյուղական բնակավայրերը նույնպես ունեն հազարամյակների պատմություն: Գյուղերը խոշոր են հատկապես աշխատատար բուսաբուծության շրջաններում, իսկ չորային շրջաններում դրանք հանդիպում են ստորերկրյա ջրերի ելքերին մոտ:

• • •

Լեռնային շրջաններում զարգացած է մեղվաբուծությունը, անապատակիսաանապատային շրջաններում՝ ուղտաբուծությունը, ծովափնյա երկրներում՝ ձկնորսությունը, իսկ քրիստոնյա բնակչություն ունեցող երկրներում՝ խոզաբուծությունը:

Հարավարևմտյան Ասիայում արագ զարգանում են ***տրանսպորտի*** գրեթե բոլոր տեսակները: Զարգացման բարձր մակարդակ ունի խողովակաշարայինը: Խողովակաշարերը նավթի և գազի արդյունահանման շրջաններից հիմնականում ձգվում են մինչև արտահանման նավահանգիստներ: Առանձնապես մեծ է **Բոսֆոր**, **Բաբ էլ Մանդեբ**, **Դարդանելի**, **Հորմուզ** նեղուցների դերը (քարտեզի վրա նշեք վերոնշյալ նեղուցները և խոշոր նա-

վահանգիստները):

Տարածաշրջանում մեծ է օդային տրանսպորտի դերը: Որոշ երկրներում այդ տեսակը դարձել է ծառայություն մատուցող՝ Կատար, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա: «***Օդային խոշոր դարպաս***» է **Դուբայը՝** տարեկան 90 մլն. ուղևորաշրջանառության ծավալով:

• • •

2022թ. դրությամբ տարածաշրջանում ապրում էր ավելի քան 412 մլն մարդ, որից 173 մլն-ը՝ Իրանում ու Թուրքիայում, 117 մլնը՝ Աֆղանստանում, Եմենում, Իրաքում ու Սաուդյան Արաբիայում, այսինքն յոթ երկրում՝ ընդհանուր բնակչության 70,4%-ը:

Հարավարևմտյան Ասիայի երկրների մեծ մասում գերակշռում են տղամարդիկ, որոնց տեսակարար կշիռը անհամեմատ բարձր է նավթարդյունահանող և արտահանող երկրներում՝ Բահրեյնում 69%, Կատարում՝ 67% ԱՄԷ-ում՝ 64% (ինչու՞): Ցածր է Վրաստանում, Հայաստանում, Կիպրոսում:

• • •

Սաուդյան Արաբիայում, Իրանում, Քուվեյթում, ԱՄԷ-ում, Իրաքում, Բահրեյնում կան նավթավերամշակման հզոր գործարաններ ու դրանց արտահանման խոշոր նավահանգիստներ:

• • •

Անասնապահության զարգացման համար կարևոր են տարածաշրջանի լեռնային ու նախալեռնային արոտավայրերը (արոտային անասնապահություն): Սրանք ունեն լավագույն պայմանները մանր եղջերավոր անասնաբուծության՝ ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման համար: Թուրքիայում զարգացած է անգորական երկարամազ այծերի բուծումը, որի բուրդը արժեքավոր է և կոչվում է **մոհայր**: